ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48 , Հեռ.060 517670 էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 200

ՇԱՀՈՒՆԻ ՇՈՒՇԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ և 51-րդ կետերի պահանջներով և Շահունի Շուշանյանի դիմումը **որոշում եմ.**

1. Շահունի Շուշանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի Նորավան թաղամաս 3-րդ փողոց թիվ 11 հասցեում գտնվող 07-062-0202-0025 կադաստրային ծածկագրով բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման 0.070177 հա հողամասը և ՀՀ Կոտայքի մարզ,Վերին Պտղնի Նորավան թաղամաս 3-րդ փողոց թիվ 11/1 հասցեում գտնվող 07-062-0202-0024 կադաստրային ծածկագրով բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման 0.07014 հա հողամասը միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել նոր հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի Նորավան թաղամաս 3-րդ փողոց թիվ 11:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՊՈՂՈՍՅԱՆ

20 19թ.նոյեմբերի 04
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 201

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏՐԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, ինչպես նաև Վերին Պտղնի համայնքապետարանի դիմումը ' **որոշում եմ**

1. Վերին Պտղնի համայնքապետարանին տալ իրեն պատկանող բնակավայրերի նշանակության հողմասում մսուր մանկապարտեզի կառուցման շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն :

2. Հանձնարարել Վերին Պտղնի համայնքապետարանի շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն:

3. Շինարարական աշխատանքները սկսելուց հետո եռօրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի համայնքապետարան ներկայացնել ձև N5 տեղեկանքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 19 թ.նոյեմբերի 05
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 202

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1 կետերի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Ստեփան Էվաջյանի դիմումը, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ շինությունը կառուցվել է ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Ստեփան Էվաջյանին սեփականության իրավունքով պատկանող, Վերին Պտղնի Նոր թաղամաս 1-ին փողոց թիվ 1 հասցեում գտնվող տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները՝ բնակելի տուն՝83.7 քմ, և ծածկարան ՝ 15.07 քմ համարել օրինական:

2. Սահմանել,որ հողամասի սեփականտերը

1) Որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Վերին Պտղնի համայնքի բյուջեի N 900105231212 հաշվեհամարին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված բնակելի տան համար 217620 / երկու հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր քսան/ ՀՀ դրամ և ծածկարանի համար 23509/ քսաներեք հազար հինգ հարյուր ինն / ՀՀ դրամ օրինականացման վճարը:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 19թ.նոյեմբերի 07
գ.Վերին Պտղնի